ՆԵԼԼԻ ՄԻՆԱՍՅԱՆ

ԹՈՒՐՔԻԱՅԻ ԱՌԵՎՏՐԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԱՍԻԱՅԻ ԹՅՈՒՐՔԱԼԵՋՈՒ ԵՐԿՐՆԵՐԻ ՀԵՏ (1990-ԱԿԱՆ ԹԹ. 2-ՐԴ ԿԵՍ)

1990-ական թթ. սկզբներին Կենտրոնական Ասիայի երկրների նկատմամբ Թուրքիայի իրականացրած քաղաքականության բաղկացուցիչ մասը կազմում էր առևտրատնտեսական հարաբերությունների հաստատումը: ԽՍՀՄ-ի փլուզմամբ Թուրքիայի համար նոր հնարավորություն ստեղծվեց հետխորհրդային տարածաշրջանում վերաձևել իր քաղաքականությունը, մասնավորապես նրա հետաքրքրությունը մեծացավ Կենտրոնական Ասիայի թյուրքալեզու երկրների նկատմամբ: Զնավորված նոր պատմական պայմաններում Թուրքիան փորձում էր իրականացնել իր վաղեմի պանթյուրքական նպատակները: Թուրքիան առաջին պետությունն էր, որ ճանաչեց Կենտրոնական Ասիայի երկրների անկախությունը և նրանց հետ հաստատեց դիվանագիտական հարաբերություններ, որ իր մեջ ներառում էր նաև առևտրատնտեսական բաղադրիչը[1]:

Հաստատելով առևտրատնտեսական հարաբերությունները՝ Թուրքիան օգտագործեց այն հանգամանքը, որ այս երկրները հարուստ են բնական ռեսուրսներով, հատկապես նավթով և գազով[2]: Առևտրատնտեսական հարաբերությունների զարգացման անհրաժեշտ նախադրյալներն էին հեռահաղորդակցության, հեռուստառադիոյի զարգացումը և ճանապարհների կառուցումը, քանի որ Թուրքիան կենտրոնասիական երկրների հետ չունի ընդհանուր սահման:Առևտրատնտեսականական հարաբերությունների հաստատման տեսանկյունից ամենամեծ ակտիվությունը նկատվեց 1991-1993 թթ., երբ տեղի ունեցան փոխադարձ այցելություններ և կնքվեցին մի շարք համաձայնագրեր, որոնց արդյունքում էլ Թուրքիան սկսեց ակտիվ գործունեություն իրականացնել թյուրքալեզու հանրապետությունների տնտեսությունների տարբեր բնագավառներում[3]:

---

[1] http:// www. Byegm.gov.tr/ayintarihidetay.aspx?Id=220& Yıl=1991&Ay=12

[2] Gamze Gungörmüş Kona, Problems of The Central Asian Republics: Social, Political and Economic Problems Central Asian Republics Face and The Role of Turkey inThe Central Asian Region, http:// gamzegungormuskona.blog-spot.com.

[3] Թուրքիայի և Կենտրոնական Ասիայի թյուրքալեզու երկրների միջև առևտրատնտեսական հարաբերությունների հաստատման մասին տե՛ս Ն. Մինասյան, Թուրքիայի և Կենտրոնական Ասիայի թյուրքալեզու երկրների միջև հարաբերությունների հաստատման հարցի շուրջ /1990-ական թթ. 1-ին կես/, Թյուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ, հ. 7, Ե., 2010 էջ 221-237:

1990-ական թթ. 1-ին կեսին Թուրքիայի իրականացրած միջոցառումները թյուրքալեզու երկրների ֆինանսաբանկային, շինարարության, հաղորդակցության, տուրիզմի և տնտեսության մյուս բնագավառներում, ինչպես նաև կրթական, մշակութային և հումանիտար օգնության ծրագրերի իրականացումը, հաստատեցին նրա ներկայությունը:

1990-ական թթ. երկրորդ կեսին հիմնական գծերով շարունակվեց Թուրքիայի և կենտրոնասիական պետությունների միջև համագործակցությունը: Այս ժամանակահատվածում թյուրքալեզու երկրները կարողացան հիմնականում հաղթահարել Խորհրդային միության փլուզմամբ իրենց երկրներում առաջացած տնտեսական ճգնաժամերը և կայունացնել վիճակը: 1990-ական թթ. կեսերին Թուրքիայում քաղաքական և ֆինանսական իրավիճակը այնքան էլ կայուն չէր: Այս շրջանում իշխանության մոտ էին գտնվում հիմնականում իսլամական ուժեր, մասնավորապես, երբ ձևավորվեց կոալիցիոն կառավարությունը (1996թ. հունիս-1997թ. հուլիս), որի ղեկավարն էր Բարօրություն կուսակցության առաջնորդ Նեջմեթին Էրբաքանը: Նշենք, որ այս շրջանում Թուրքիայի արտաքին քաղաքականության մեջ տեղի ունեցավ որոշակի փոփոխություն կենտրոնասիական հանրապետությունների նկատմամբ: Կոալիցիոն կառավարությունը հիմնական ուշադրությունը դարձրեց իսլամական հանրության ձևավորմանը, այսինքն՝ նա սկսեց հարաբերություններ զարգացնել իսլամական երկրների հետ: Կրճատվեց ֆինանսական աջակցության չափերը TIKA-ի (Türk İşbirliği ve Kalkınma Ajansı-TIKA) այն ծրագրերին, որոնք իրականացվելու էին կենտրոնասիական հանրապետություններում[4]: Սակայն սա չէր նշանակում, որ TIKA-ի գործունեությունը սահմանափակվեց: Դաշտոնական տվյալներով 1999 թ. վերջերին TIKA-ի մասնակցությամբ և նախաձեռնությամբ կենտրոնասիական երկրներում իրականացվեց 270 ծրագիր, հիմնականում տեխնիկական օգնության և համագործակցության բնագա-

---

[4] Թուրքական տարբեր ընկերությունների և կազմակերպությունների գործունեությունը ղեկավարելու և համակարգելու նպատակով Արտաքին գործերի նախարարությանը կից 1992 թ. հունվարի 27-ին ստեղծվեց Թուրքական համագործակցության և զարգացման գործակալությունը / Türk İşbirliği ve Kalkınma Ajansı-TİKA/ Վերջինս թյուրքալեզու երկրներում առաջարկում էր, տարբեր բնագավառներին վերաբերող, համագործակցության ծրագրեր, որոնք հիմնականում ունեին պանթյուրքական ուղղություն: Նրանք քայլեր ձեռնարկեցին դեմոկրատական համակարգի և ազատ շուկայական տնտեսության հաստատման ուղղությամբ, միաժամանակ փորձում էին նպաստել այդ երկրների ինտեգրմանը համաշխարհային համակարգին: Ավելի մանրամասն տե՛ս TIKA-ի պաշտոնական կայքը. http://www.tika.gov.tr.

վառներում: Այս ծրագրերից 210-ը իրականացվել է առանձին երկրներում, իսկ 60-ը՝ տարածաշրջանում[5]:

Շարունակեցին իրենց գործունեությունը թուրքական շինարարական ընկերությունները, սակայն նրանց համար լուրջ մրցակիցներ էին համարվում Պակիստանի, Չինաստանի և Իրանի նմանատիպ ընկերությունները: Նշենք, որ կենտրոնասիական երկրներում իր տնտեսական գործունեությունն էր ծավալում հատկապես Իրանը, որն էլ համարվում էր Թուրքիայի գլխավոր մրցակիցներից մեկը[6]:

Թուրքալեզու հանրապետություններում շարունակեց իր դիրքերը պահպանել թուրքական մանր և միջին բիզնեսը: Այս բնագավառում գերակշռում էր թուրքական էքսպորտը, որին օգնում էին էքսիմբանկի տրամադրած վարկերը: Վերջինս վարկեր էր տրամադրում Կենտրոնական Ասիայի և Կովկասի երկրներին, որոնց ընդհանուր գումարը 2000 թ. մարտին հասավ 468,32 մլն դոլարի[7]: Էքսիմբանկի տրամադրած վարկերով կառուցվեցին հյուրանոցներ, առևտրային ու գործարար կենտրոններ, օդանավակայաններ և տեղեկատվական բնույթի կառույցներ[8]:

Թուրքիայի և թյուրքալեզու հանրապետությունների միջև շարունակվեց համագործակցությունը տարբեր կազմակերպությունների մակարդակով, մասնավորապես Տնտեսական համագործակցության կազմակերպության /այսուհետև՝ ՏՀԿ/[9]: 1997 թ. լրանում էր Իզմիրի պայմանագրի 20 տարին, որով ստեղծվել էր ՏՀԿ-ն և անդամ-պետությունների միջազգային փոփոխությունները հաշվի առնելով վերաձևեցին այն: 1997 թ. սեպտեմբերին Իզմիրում անցկացվեց ՏՀԿ նախարարների խորհրդի նիստ, որտեղ

---

[5] Avrasya Dosyası, 2000, № 134, s. 2.

[6] Edmund Herzig, Iran and Central Asia, Central Asian Security, Editors Roy Allison, Lena Jonson, Royal Institute of International Affairs, Brooking Institution Press, London, Washington, 2001, pp. 178-184

[7] Baskın Oran, Türk Dış Politikası, Cilt II. 1980-2001, İletişim Yayınları, İstanbul, 2001, s. 427.

[8] Mehmet Dikkaya, Türkiye ile Türk Cumhuriyetleri Arasındakı Economik İliskiler, bilgi-9/Bahar 1999, s. 4.

[9] Տնտեսական համագործակցության կազմակերպությունը հանդիսանում է Համագործակցություն տարածաշրջանային զարգացման համար կազմակերպության իրավահաջորդը: Վերջինս ձևավորվել էր 1964թ. Իրանի, Պակիստանի և Թուրքիայի կողմից և փլուզվեց 1979 թ. իրանական հեղափոխության հետևանքով. 1985 թ. հուսվարին այս երեք երկրների ղեկավարների հանդիպման ժամանակ միությունը վերականգնվեց Տնտեսական համագործակցության կազմակերպություն անունով. ՏՀԿ-ի բնույթը բավականին փոխվեց, երբ 1992թ. նոյեմբերի 28-ին նրան անդամակցեցին յոթ նոր անդամներ. Ադրբեջանը, Ղազախստանը, Ղրղզստանը, Ուզբեկստանը, Թուրքմենստանը, Տաջիկստանը և Աֆղանստանը: ՏՀԿ-ին այս երկրների անդամակցությունը կապված էր ոչ միայն ընդհանուր պատմական և մշակութային կապերով, այլ նաև տնտեսական խնդիրներով:

ընդունվեց կազմակերպության նոր կանոնադրությունը և փոփոխություններ կատարվեցին նաև կազմակերպության կառուցվածքում[10]: Անդամ-երկրները սկսեցին համագործակցել առևտրի, ածխաջրածնային ռեսուրսների, վարկավորման, գյուղատնտեսության, արտադրության, առևտրի, մշակույթի, առողջապահության, կրթության, բնապահպանական խնդիրների բնագավառներում: ՏՀԿ-ի շրջանակներում կարևոր խնդիր է տրանսպորտային միջոցների և էներգակիրների տեղափոխման հարցը, որը քննարկվեց Ալմաթիում 1998 թ. տեղի ունեցած ՏՀԿ-ի 5-րդ գագաթաժողովում: Այստեղ շեշտը դրված էր Կասպից ծովից էներգակիրների տեղափոխման հարցի վրա և վերջնական որոշում չկայացվեց: Այս խնդիրները ավելի հստակ քննարկվեցին 2002 թ. հոկտեմբերին Ստամբուլում տեղի ունեցած ՏՀԿ-ի 7-րդ գագաթաժողովում, որտեղ մեկ անգամ ևս նշվեց անդամ-պետությունների միջև տնտեսական համագործակցության սերտացումը: Գագաթաժողովից հետո սկսվեց նավերի կանոնավոր տեղաշարժը Ստամբուլ-Թեհրան-Թուրքմենաբաշ-Տաշքենդ-Ալմաթի ուղիով: Իրականացվեցին նաև թռիչքներ տրանսասիական օդային գծով, հիմնականում տեղափոխվում էին քաղաքացիական ուղևորներ: Սրանով անդամ-երկրները հույս ունեին ամրապնդել տարածաշրջանային համագործակցությունը և զարգացնել առևտուրն ու տուրիզմը[11]:

Այս տարիների ընթացքում ՏՀԿ-ն շատ ցայտուն արդյունքների չի հասել, չնայած որ բավականին աշխատանքներ են կատարվել անդամ-երկրների միջև առևտրատնտեսական հարաբերությունների զարգացման ուղղությամբ: Կենտրոնասիական հանրապետությունների ջանքերով կազմակերպության քաղաքականացում տեղի չունեցավ, որն էլ նպաստում է ներքին և արտաքին ուժերը օգտագործել տնտեսական համագործակցությունը զարգացնելու համար[12]: Չնայած որ ՏՀԿ-ի տարբեր անդամների միջև կա մրցակցություն, տարածաշրջանում կա անկայունություն, այնուամենայնիվ ՏՀԿ-ի գործունեությունը կարելի է գնահատել բազմախոստումնալից:

Թուրքիայի և թյուրքալեզու հանրապետությունների միջև շարունակվում էին կազմակերպվել գագաթաժողովներ՝ 1995 թ. օգոստոսի 28-ին այն տեղի ունեցավ Բիշկեկում, 1996 թ. հոկտեմբերի 18-21-ը՝ Տաշքենդում, 1998 թ. հունիսի 3-ին՝ Աստանայում, 2000 թ. ապրիլի 26-27-ին՝ կրկին

---

[10] Այս մասին տե՛ս ՏՀԿ-ի պաշտոնական կայքը, http://www.ecosecretariat.org

[11] Ստամբուլի 7-րդ գագաթաժողովի հայտարարության ամբողջական տեքստը տե՛ս http://www.ecosecretariat.org/ftproot/Documents/Declarations/7sum_dcl.htm.

[12] Е. И. Уразова, Экономическое сотрудничество Турции и тюрских государств СНГ, М., 2003, с. 157.

Ստամբուլում: Այս գագաթնաժողովներով փորձեր էին կատարվում գծագրել թյուրքական աշխարհի սահմանները և ավելի սերտացնել թյուրքալեզու երկրների միջև համագործակցությունը[13]: Պետք է նշել, որ այս բոլոր գագաթնաժողովներում էլ մեծ տեղ էր հատկացվում առևտրատնտեսական համագործակցության զարգացմանը, մասնավորապես փորձում էին վերականգնել պատմական Մետաքսի ճանապարհը: Վերը նշված բոլոր գագաթնաժողովներում և, ընդհանրապես, Թուրքիան մեծ ուշադրություն էր դարձնում Կասպից ծովի ավազանի բնական ռեսուրսների տեղափոխման հարցին: Դեռևս 1990-ական թթ. սկզբներից Թուրքիայի քաղաքականությունը հիմնականում միտված էր նրան, որ նոր կառուցվող խողովակաշարերը անցնեն Թուրքիայի տարածքով[14]: Սրանով կբարձրանար նրա միջազգային նշանակությունը և դա դրական ազդեցություն կունենար Թուրքիայի տնտեսության վրա: Առաջարկված ծրագրերից Թուրքիան փորձում էր իրականացնել Բաքու-Թբիլիսի-Ջեյհան ծրագիրը, որին մեծ աջակցություն էր ցույց տալիս ԱՄՆ-ն: Մյուս կողմից նոր ձևավորվող իրադրությունում Թուրքիան փորձեց ստանալ ավելին՝ համագործակցելով ԱՄՆ-ի հետ, որը բացի նավթից հետաքրքրված էր տարածաշրջանում ռուսական ազդեցության թուլացմամբ[15]:

1990-ական թթ. երկրորդ կեսից, կնքված մի շարք առևտրային պայմանագրերի հիման վրա, սկսեցին զարգանալ նաև առևտրային հարաբերությունները Թուրքիայի և Կենտրոնական Ասիայի թյուրքալեզու երկրների միջև: Թուրքիայի կողմից տարածաշրջանում իրականացրած առևտրի ծավալները բավականին ավելացան, եթե 1992թ. այն կազմում էր 160.920.000 դոլար, ապա 1998 թ. այն արդեն հասավ 969.540.000 դոլարի: Այսինքն տարածաշրջանի երկրներում Թուրքիայի արտահանման բաժինը կազմում էր 3,6 տոկոս, այն դեպքում, երբ Ռուսաստանինը՝ 5 տոկոս էր[16]:

1998-2002 թթ. բնութագրվեցին Թուրքիայի և թյուրքալեզու հանրապետությունների միջև առևտրատնտեսական համագործակցության նվազմամբ: Սա հիմնականում պայմանավորված էր 1998թ. Ռուսաստանում և Հարավ-արևելյան Ասիայի երկրներում տեղի ունեցած ֆինանսատնտեսական ճգնաժամով, որը իր բացասական ազդեցությու-

---

[13] Natık Mamedli, Integration Issues At Summits of The Turkic-Speaking States, Central Asia and The Caucasus, No. 1(19), 2003, p. 139.

[14] Gareth M. Winrow, Turkey's Relations With The Transcaucasus and The Central Asian Republics. Perseption-Journal of International Affairs, Vol. 1, March-May, 1996, p. 140.

[15] Ռ. Սաֆրաստյան, Ռուսաստանը և Թուրքիան Հարավային Կովկասում. աշխարհառազմավարական զինադադա՞ր, 21-րդ դար, թիվ 4 (10), 2005, էջ 38:

[16] Baskın Oran. նշվ. աշխ., էջ 430

նը թողեց նաև Թուրքիայի տնտեսության վրա, որն առանց այն էլ անկայուն էր: Սրան ավելացավ 1999թ. երկրաշարժը և նավթի գների թանկացումը: 2001 թ. Թուրքիայում տնտեսական ճգնաժամը շարունակվում էր, որն էլ հանգեցրեց քաղաքական ճգնաժամի, արդյունքում տեղի ունեցան արտահերթ պառլամենտական ընտրություններ: Այս ամենը անշուշտ ազդում էր թուրքական տնտեսության և արտաքին առևտրի վրա, նվազեց նաև թյուրքալեզու հանրապետությունների հետ համագործակցությունը: Այսպիսով ավելի կրճատվեց պետության աջակցությունը թյուրքալեզու հանրապետություններում գործող գործարարների, կազմակերպությունների և TIKA-ի ծրագրերին: Մրցակցությունը ավելի ուժեղացավ թուրքական և օտարերկրյա ընկերությունների միջև, որի արդյունքում թուրքական կապիտալը բավականին թուլացավ[17]:

1999-2002 թթ., երբ Բ. Էջևիթի կուալիցիոն կառավարության մեջ շատ պաշտոններ զբաղեցնում էին Ազգային շարժում կուսակցության անդամները, դարձյալ վերածնվեցին ազգայնամոլական և թյուրքական գաղափարները: Նրանք քայլեր ձեռնարկեցին ամրապնդելու առևտրատնտեսական համագործակցությունը թյուրքալեզու հանրապետությունների հետ:

Թուրքիայում 8-րդ 5-ամյա զարգացման պլանում հատուկ բաժին է նվիրված Թուրքիայի և թյուրքալեզու հանրապետությունների միջև հարաբերություններին, նշելով, «զարգացնել համագործակցությունը տնտեսության, մշակույթի, գիտության և տեխնիկայի բնագավառներում»[18]: Պետք է նշել, որ Թուրքիան չնայած տրված խոստումներին թյուրքալեզու երկրներին տրամադրել լուրջ ֆինանսատնտեսական օգնություն չէր կարող, ուստի որոշ հիասթափություն առաջացավ թյուրքալեզու երկրների մոտ Թուրքիայի նկատմամբ: Տնտեսական ոլորտում Թուրքիայի գործադրած ջանքերը ավելի շատ սեփական հնարավորությունների գերազնահատման արդյունքն էր: Պատահական չէ, որ Թուրքիայի Պետական պլանավորման վարչության 2000թ. վերոնշյալ պլանի շրջանակներում Թուրքիայի և թյուրքալեզու երկրների միջև հարաբերությունների վերաբերյալ կազմված հատուկ հանձնաժողովի զեկույցի մեջ նշվում էր, որ «Անիրագործելի խոստումներ չտալը և խոստումները կատարելը կբարձրացնի այդ երկրների վստահությունը մեր նկատմամբ»[19]:

---

[17] Е. И. Уразова, նշվ. աշխ., էջ 51.

[18] Türkiye ile Türk Cumhuriyetleri ve Bölge Ülkeleri İlişkileri Özel İhtisas Komisyonu Raporu, Sekizinci Beş Yıllık Kalkınma Planı, Ankara, 2000, s. 51, http://ekutup.dpt.gov.tr/turkcumh/oik528.pdf.

[19] Türkiye ile Türk Cumhuriyetleri ve Bölge Ülkeleri İlişkileri Özel İhtisas Komisyonu Raporu, Sekizinci Beş Yıllık Kalkınma Planı, T. C. Başbakanlık Devlet Manlama Teşkilatı Müsteşarlığı.

2002 թ. իշխանության գլուխ եկած միակուսակցական Արդարություն և զարգացում կուսակցության կառավարությունը նոյեմբերի վերջին թուրքական պառլամենտ ներկայացրեց իր ծրագիրը, որը իր մեջ պարունակում էր կոնկրետ գործողություններ, ինչը Թուրքիան նպատակադրվում էր իրականացնել թյուրքալեզու հանրապետություններում: Մասնավորապես, ծրագրում նշվում էր. «Չնայած մեր պատմական, մշակութային և սոցիալական ընդհանրությանը կենտրոնասիական հանրապետությունների հետ, գոյություն ունեցող համագործակցությունը չի արդարացնում մեր սպասումները: Ուստի մեր կառավարությունը առաջարկում է կենտրոնացնել ուժերը այդ հարաբերությունների հետագա բարելավման համար և փորձել այս տարածաշրջանը վերածել սերտ համագործակցության գոտու»[20]:

Այսպիսով՝ կարող ենք նշել, որ 1990-ական թթ. 2-րդ կեսին շարունակվեց Թուրքիայի և կենտրոնասիական հանրապետությունների միջև համագործակցությունը: Նրանց հարաբերությունները 1990-ական թթ. 1-ին կեսին ավելի աշխույժ էին, իսկ 1990-ական թթ. 2-րդ կեսից դրանց դանդաղումը կապված էր Թուրքիայում առկա տնտեսական և քաղաքական ճգնաժամերի հետ, նաև Թուրքիայի ունեցած հնարավորությունների սահմանափակվածության հետ: Թուրքիան շարունակում էր տնտեսական համագործակցությունը թյուրքալեզու հանրապետությունների հետ: 1998թ. Թուրքիայում դարձյալ վերածնվեցին պանթյուրքական զաղափարները և կառավարությունն աշխուժացրեց իր քաղաքականությունը: Նշենք, որ այս ժամանակաշրջանում պանթյուրքական զաղափարներով TIKA-ն շարունակում էր իր ծրագրերի իրականացումը: Թյուրքալեզու երկրների հետ հարաբերությունների զարգացումը փաստում է, որ Թուրքիայի պետական պլանավորման ծրագրերում մեծ տեղ է հատկացվում այս համագործակցությանը: Ներկայիս իշխող ԱԶԿ-ն նույնպես մեծ տեղ է հատկացնում այս երկրների հետ բազմակողմանի համագործակցության զարգացմանը: Մեր կարծիքով Թուրքիան չի իրականացնում նախատեսված ծրագրերը ֆինանսական միջոցների սղության պատճառով, քանի որ նա միջին եկամուտներ ունեցող երկիր է: Ինչ վերաբերվում է Թուրքիայի հետաքրքրություններին Կենտրոնական Ասիայի թյուրքալեզու երկրների նկատմամբ, ապա դրանք ունեն երկարատև բնույթ, ինչը պայմանավորված է ոչ միայն առևտրատնտեսական համագործակցության զարգացմամբ, այլև վաղեմի պանթյուրքական նպատակների իրականացմամբ:

Yayın No. DPT:2511-ÖİK:528, Ankara, 2000, T. C., ss. 32-57, http://www.ekutup.dpt.gov.tr/disekona/oik528.pdf

[20] Başbakan Abdullah Gül Tarafından TBMM'ne sunulan 58'inci Hükümet Programı, Ankara, 23 Kasım 2002, s. 27.